ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՒՅՇՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ № 11 - 12 (16207) ՇԱԲԱԹ, 8 ՓԵՏՐՎԱՐԻ 2014 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ՍՊԱՌՆԱԼԻՔ ՉԷ»

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին ելույթ ունեցավ Անվտանգության հարցերին նվիրված՝ Մյունխենի 50-րդ գագաթաժողովին:

Վարչապետն իր ելույթում անդրադարձավ երկրում իրականացվող բարեփոխումների, արտաքին քաղաքական կուրսի անշեղության, ինչպես նաեւ Ռուսաստանի հետ Վրաստանի հարաբերությունների հարցին: Ինչպես նշեց Վրաստանի վարչապետը, երկրի կառավարությունը հնարավոր ամեն ինչ անում է Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ, թեպետ բռնազավթված տարածքի սահմանագծի երկայնքով այն ընդհարվում է սադրանքի հետ: «Արգասաբեր աշխատանքի արդյունքում, մենք Ռուսաստանի հետ հաստատեցինք մշակութային, առեւտրական եւ տրանսպորտային ոլորտում հարաբերություններ: Վրացական արտադրանքը մուտք գործեց ռուսական շուկա: Վրաստանի կառավարությունը հնարավոր ամեն ինչ անում է հյուսիսային հարեւ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

«ՎՐԱՍՏԱՆԸ ԿՇԱՐՈՒՆԱԿԻ ՇԱՐԺՈՒՄԸ ՆԱՏՕ-Ի ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ»

Փետրվարի 3-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին Բրյուսելում մասնակցեց Վրաստան-ՆԱՏՕ հանձնաժողովի նիստին, որի ավարտից հետո, հանդիպում ունեցավ ալյանսի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսսենի հետ:

Հանդիպմանը կողմերն ընդգծեցին Վրաստանի եւ ՆԱՏՕ-ի միջեւ երկկողմ համագործակցության եւ գործընկերային հարաբերությունների կայունության նշանակությունը: Հանդիպմանը խոսվեց նաեւ ՆԱՏՕ-ին ինտեգրման ճանապարհին Վրաստանի ձեռքբերումների, Վրաստանում վերջին ժամանակներում իրականացվող դինամիկ գործընթացների եւ բարեփոխումների մասին: Անդերս Ֆոգ Ռասմուսսենն ընդգծեց Վրաստանի ավանդը եվրատլանտյան անվտանգության ընդհանուր գործընթացում:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՈՂՋԵՐԹ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՈԳԻՆ ՉՊՈՇԱԲԵՐԵՑԻՆՔ ԿՈՆԿՐԵՏ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ»

Փետրվարի 5-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ Սոչիի օլիմպիական խաղերին Վրաստանը ներկայացնող մարզիկ-մարզուհիների՝ Վրաստանի հավաքականի դրոշակակիր Նինո Ծիկլաուրու, Յասոն Աբրամիշվիլու եւ Ալեքսի Բենիանիձեի հետ:

Հանդիպմանը, որին ներկա էին նաեւ Վրաստանի երիտասարդության եւ սպորտի գործերով նախարար Լեւ-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻՆ ՀԻՄՆԵՑ «ՔԱՂԱՔԱՑԻ» ԱՆՎԱՄԲ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին փետրվարի 4-ին անցկացրեց իր կողմից հիմնված «Քաղաքացի» ոչ կառավարական կազմակերպության շնորհանդեսը:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՀՍԿՎԵԼՈՒ Է ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Լրագրողների հետ հանդիպմանը Բիձինա Իվանիշվիլին հայտարարեց, որ իր հիմնած կազմակերպության գլխավոր նպատակն է վերահսկել կառավարության գործունեությունը եւ հաշվետվություն պահանջել: «Այսօր քաղաքացիական հատվածից ես մտադիր եմ վերահսկել իշխանություններին եւ

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԸՆԴԳԾՎԵԼ Է ԲՈՒՀԵՐԻ ՄԻՋԵՎ ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի կրթության եւ գիտության նախարարի հրավերով, հունվարի 31- փետրվարի 1-ին պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում Հայաստանի կրթության եւ գիտության (ԿԳ) նախարարության պատվիրակությունը՝ նախարար Արմեն Աշոտյանը գլխավորությամբ:

Այցի շրջանակներում, Հայաստանի ԿԳ նախարարը հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, կրթության նախարար Թամար Սանիկիձեի, Վրաստանի հայկական

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՀԵՏ

Վրաստանում պաշտոնական այցով գտնվող Հայաստանի կրթության եւ գիտության (ԿԳ) նախարար Արմեն Աշոտյանը հանդիպել է Թբիլիսիի թիվ, թիվ 104, 103, 132, Ախալքալաքիի, Ախալցիխեի եւ Նինոծմինդայի շրջանների հայկական հանրային դպրոցների ու բաժինների մի խումբ մանկավարժների հետ, որը կայացել է Թբիլիսիի «Ուսուցչի տանը»:

Հանդիպմանը Հայաստանի ԿԳ նախարարն անդրադարձավ Վրաստանում հայկական դպրոցների ներկայիս վիճակին, մասնավորապես՝ խոսեց մանկավարժների վերապատրաստման եւ «Հայոց լեզվի» դասաժամերի ավելացման, ինչպես նաեւ «Հայ ժողովրդի պատմության» հավելյալ (ֆակուլտատիվ) դասաժամեր մտցնելու հարցին: Հանդիպման մանրամասների մասին մեր թղթակիցը զրուցել է թիվ 103 հանրային դպրոցի հայկական բաժնի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Գայանե Մխիթարյանի հետ:

- Տիկին Գայանե, ի՞նչ ընթացք ուներ հանդիպումը:

- Հանդիպումը շատ ջերմ էր, հարցերը բարձրացվում ու քննարկվում էին երկուստեք:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԸՆԴՈՒՆՎԵՑ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ

Վրաստանի խորհրդարանը ավարտեց ինքնակառավարման օրենսգրքի նախագծի քննարկումները: Օրենսգրքի նախագիծն ու դրանից ծագող օրենսդրական շուրջ 25 փոփոխությունները փետրվարի 6-ին պատգամավորներն ընդունեցին երրորդ եւ եզրափակիչ ընթերցմամբ՝ 77 կողմ ու 7 դեմ ձայներով:

Նոր օրենսգրքի համաձայն, ինքնակառավարման բարեփոխումների շրջանակներում ծրագրվել է ինքնակառավարման քաղաքների թվի ավելացում: Բարեփոխման առաջին փուլում նախատեսված է ներկայիս ինքնակառավարման հինգ քաղաքներին (Թբիլիսիի, Ռուսթավիի, Քութայիսիի, Փոթիի, Բաթումի) ավելացնել եւս յոթը (Թելավին, Գորին, Մցխեթան, Ախալցիխեն, Ամբրոլաուրին, Օզուրգեթին, Զուգդիդին), որտեղ քաղաքագլուխներն ընտրվելու են ուղղակի ընտրակարգով: Նախագծի համաձայն, առաջին փուլում ինքնակառավարման կարգավիճակ է շնորհվել այն քաղաքներին, որտեղ բնակչությունը 15 հազարից ավելի է, եւ որոնք հանդիսանում են տարածաշրջանների կենտրոններ: Անմիջական ընտրակարգով կընտրվեն նաեւ մնացած մունիցիպալիտետների վարչության նախագահները, որոնց վերջնական թվաքանակը պետք է սահմանվի մինչեւ տեղական ընտրությունները: Ընտրությունների օրը նշանակում է Վրաստանի նախագահը՝ կառավարության համաձայնությամբ:

Կառավարությունն ու խորհրդարանը համաձայնել են, որ սակրեբուլոյի կողմից անմիջական ընտրակարգով ընտրված քաղաքապետին կամ վարչության նախագահին անվստահություն հայտնելու, դատարանում սակրեբուլոյի սույն որոշման բողոքարկման դեպքում, վերոնշյալ քաղաքապետի եւ վարչության նախագահի իրավասություններ մինչեւ դատարանի կողմից հայտի քննարկման ավարտը չեն դադարեցվում, եւ նոր ընտրություններ չեն նշանակվում:

Օրինագծի մանրամասները՝ թերթի առաջիկա համարներում:

ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱԽՈՐՀՈՒՐԴ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ԷԻՆ

Պաշտոնական այցով Թբիլիսիում է գտնվում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թորբեռն Յագլանդը: Այցի շրջանակներում, եվրոպացի դիվանագետը հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու, ԱԳ նախարար Մայա Փանջիկիձեի հետ:

Վրաստանի նախագահի եւ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի հանդիպմանը քննարկվեցին համագործակցության, Վրաստանում անցկացվող եւ իրականացված բարեփոխումների, տեղական ինքնակառավարման ընտրությունների եւ այդ ուղղությամբ մշակվող փոփոխությունների հետ կապված հարցերը: Առանձնակի ուշադրություն հատկացվեց նոր Սահմանադրությանը, ըստ որի, ապահովվելու է երկրում ուժերի հավասարակշռությունը եւ ժողովրդավարական զարգացումը:

Գլխավոր քարտուղարն անդրադարձավ վրաց-ռուսական հարաբերություններին եւ բռնազավթված տարածքների սահմանագոտու ընդլայնման հարցին:

Գիորգի Մարգվելաշվիլին հերթական անգամ ընդգծեց Եվրամիությանը կողմնորոշված Վրաստանի կուրսի անխախտելիությունը: Նա հայտարարեց, որ Վրաստանը հաստատակամորեն ընթանում է Եվրոպայի ուղղությամբ, ինչն իր ազդեցությունը կգործի քաղաքացիների բարօրության վրա:

Յագլանդը նախագահին ներկայացրեց գործողությունների ծրագիրը, որը նախատեսում է ժողովրդավարական բարեփոխումների անցկացում:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու եւ Եվրախորհրդի գլխավոր քարտուղար Թորբեռն Յագլանդի հանդիպմանը մտահոգություն հայտնվեց Վրաստանի բռնազավթված տարածքների նոր սահմանագծի անցկացման կապակցությամբ: Կողմերն արտահայտվեցին Եվրախորհրդի եւ Վրաստանի միջեւ հարաբերությունների ակտիվացման, համատեղ նախագծերի իրականացման օգտին:

Կողմերը քննարկեցին նաեւ Վրաստանի խորհրդարանի կողմից ընդունված ինքնակառավարման օրենսգրքին, նաեւ օրենքի գերակայությանն ու մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցեր:

ԱՅՑ

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ

Մյունխենի Անվտանգության հարցերի գագաթաժողովի ավարտից հետո, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին պաշտոնական այցով եղավ Բրյուսելում:

Այցի շրջանակներում, վարչապետը հանդիպում ունեցավ Եվրամիության ընդլայնման եւ հարեւանության քաղաքականության հարցերով եվրակոմիսար Ստեփան Ֆյուլի հետ: Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանում անցկացվող բարեփոխումների, եվրաինտեգրման գործընթացի, ինչպես նաեւ Վրաստանի եւ Եվրամիության միջեւ համագործակցության խորացման հետ առնչվող հարցեր:

Եվրահանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բարոզոյի հետ հանդիպմանը Իրակլի Ղարիբաշվիլին քննարկեց Եվրամիության հետ հարաբերությունների, եվրաինտեգրման ընթացքի եւ այդ ուղու վրա Վրաստանի առաջընթացի թեման: Առանձնակի ուշադրություն հատկացվեց ասոցիացման համաձայնագրի նախաստորագրման եւ ընդհանուր առմամբ այդ փաստաթղթի արագացված ստորագրման հարցին: Կողմերը խոսեցին նաեւ արեւելյան գործընկերության երկրների առջեւ ծառացած մարտահրավերների մասին:

Իրակլի Ղարիբաշվիլին եւ Ժոզե Մանուել Բարոզոն անդրադարձան նաեւ տարածաշրջանային անվտանգության հարցերին, քննարկեցին վրաց-ռուսական հարաբերությունները, այն իրավիճակը, որը ստեղծված է բռնազավթված տարածքներում եւ տարածաշրջանային անվտանգության ապահովման գործում Եվրամիության դերը:

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

«ՎՐԱՍՏԱՆԸ ԿՇԱՐՈՒՆԱԿԻ ՇԱՐԺՈՒՄԸ ՆԱՏՕ-Ի ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հանդիպումից հետո անցկացված համատեղ մամլո ասուլիսում, ալյանսի գլխավոր քարտուղարը նշեց, որ առաջիկա գագաթաժողովին անվերապահորեն կնշվի Վրաստանի ՆԱՏՕ-ին անդամակցության ուղղությամբ ձեռք բերած առաջընթացը: «Երրորդ երկրները չէ, որ պետք է որոշեն, թե ինչպես է վարվելու ՆԱՏՕ-ն բաց դռների քաղաքականության իրականացման ժամանակ: Առաջիկա գագաթաժողովին մենք կհաստատենք, որ մեր դռները մնում են բաց: Մենք տեսնում ենք Վրաստանի նշանակալի առաջընթացը եւ հուսով ենք, որ գագաթաժողովին այն կընդգծվի»,- հայտարարեց Անդերս Ֆոգ Ռասմուսսենը:

Իր հերթին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց. «ՆԱՏՕ-ին անդամակցության միտումը Վրաստանում պաշտպանվում է բնակչության մեծ մասի կողմից: Վրաստանի կառավարությունը ջանք չի խնայում բարեփոխումների շարունակման համար, որոնք Վրաստանին մոտեցնում են ՆԱՏՕ-ին: Հուսով ենք, որ, հենվելով արդեն իսկ ձեռք բերած նվաճումների վրա, մենք կմերձենանք ՆԱՏՕ-ին»,- հայտարարեց Ղարիբաշվիլին:

ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ՍՊԱՌՆԱԼԻՔ ՉԷ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

անի հետ մեր հարաբերությունների կարգավորման համար, սակայն մեր բռնազավթված տարածքների երկայնքով ընդհարվում ենք սադրիչ գործողությունների հետ, ինչը հակասում է մեր երկրի կառավարության մոտեցումներին»,- հայտարարեց Ղարիբաշվիլին: Խոսելով վրաց-ռուսական հարաբերությունների կարգավորման հարցում եվրոպական հանրության դերի մասին՝ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ համատեղ ուժերով պետք է Ռուսաստանին համոզել, որ Վրաստանի եվրոպական ինտեգրումը Ռուսաստանի համար սպառնալիք չի ներկայացնում: Մենք որոշեցինք բոյկոտ չհայտարարել Սոչիի օլիմպիադային եւ այնտեղ ուղարկեցինք մեր մարզիկներին: Մենք ռուսական իշխանություններին առաջարկեցինք համագործակցություն անվտանգության ոլորտում: Ելնելով դրանից՝ վրացական կողմն իրականացրել է մի շարք կոնստրուկտիվ քայլեր: Մենք համատեղ պետք է Ռուսաստանին համոզենք, որ եվրոպական ընտանիքին անդամագրվելու Վրաստանի միտումը ոչ մի սպառնալիք չի ներկայացնում: Մեր երկիրը ուղղակի ցանկանում է դառնալ առաջադիմական, ազատ, հզոր ու եվրոպական պետություն, եւ, բնականաբար, դա պետք է համապատասխանի Ռուսաստանի շահերին»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Գագաթաժողովի աշխատանքի շրջանակներում, Վրաստանի վարչապետն անցկացրեց մի շարք հանդիպումներ: Մասնավորապես, Իրակլի Ղարիբաշվիլու եւ ԵԱՀԿ նախագահ Լամբերտո Զանյերի հանդիպմանը քննարկվեցին ԵԱՀԿ դաշտային առաքելության Վրաստան վերադարձնելու հնարավորությունները, ինչպես նաեւ բռնազավթված տարածքներում մարդու իրավունքների խախտման, արհեստական սահմանագծերի անցկացման հետ առնչվող հարցերը:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունի հետ հանդիպմանը վարչապետը քննարկեց վրաց-ռուսական հարաբերությունների կարգավորման գործում Միավորված ազգերի կազմակերպության դերը:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու եւ ամերիկյան սենատոր Ջոն Մակքեյնի հանդիպման օրակարգում քննարկվեց Վրաստանի եւ ԱՄՆ միջեւ ռազմավարական գործընկերության հետ կապված հարցը: Այդ հարցը քննարկվեց նաեւ ԱՄՆ պաշտպանության նախարար Չակ Հեյգելի հետ Վրաստանի վարչապետի հանդիպմանը:

Նշենք, որ գագաթաժողովի շրջանակներում Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու անցկացրած հանդիպումներին մասնակցում էին Վրաստանի արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեն եւ պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան:



ՄԱԿ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿՈՉ

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունը կոչ է արել Սոչիի Օլիմպիական խաղերի անցկացման ընթացքում ամբողջ աշխարհում դադարեցնել ռազմական հակամարտությունները: Այս մասին նա հայտարարել է Սոչիում Միջազգային օլիմպիական կոմիտեի (ՄՕԿ) 126-րդ գլխավոր ասամբլեայում ունեցած ելույթի ժամանակ: Պան Գի Մունը ողբերգություն է համարել այն, որ աշխարհում ոչ բոլոր ռազմական հակամարտություններն են դադարեցվել: «Դա լուրջ անհանգստություն է առաջացնում: Ես բոլորին կոչ եմ անում վայր դնել զենքը թեկուզեւ Սոչիի խաղերի ընթացքում»,- ասել է նա:

ՈՒԿՐԱԻՆԱ ՌԱԴԱՅԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ

Ուկրաինայի Սահմանադրության մեջ փոփոխություններ մտցնելու մասին օրենքի նախագիծը պլանավորվում է քննարկել երկրի Գերագույն ռադայի՝ հաջորդ շաբաթ կայանալիք արտահերթ նիստում: Թեպետ Ռադայի փետրվարի 4-ի նիստն ավարտվել է առանց արդյունքի. պատգամավորները չեն կարողացել համաձայնեցնել ո՛չ բացված նստաշրջանի օրացուցային պլանը, ո՛չ էլ նիստի օրակարգը: Օրացուցային պլանի նախագծի համաձայն, 7-րդ գումարման 4-րդ նստաշրջանի աշխատանքը պետք է շարունակվի փետրվարի 4-ից մինչեւ հուլիսի 18-ը: Այս պլանը պաշտպանություն չի գտել պատգամավորների կողմից. դրա ընդունման օգտին տրվել է 185 քվե՝ անհրաժեշտ 226-ի դեպքում, ընդ որում՝ այն չի պաշտպանել երեք ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչներից ոչ մեկը:

ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ՈՒԺԻ ԿԻՐԱՌՈՒՄԻՑ ՁԵՌՆՊԱՀ ՄՆԱԼՈՒ ՊԱՀԱՆՋ

Եվրախորհրդարանի (ԵԽ) պատգամավորները պահանջել են, որ Կիեւի Անկախության հրապարակում բողոքի ակցիայի մասնակիցները «ձեռնպահ մնան ուժի կիրառումից եւ խաղաղ ճանապարհով պաշտպանեն իրենց ակնկալիքների օրինականությունը»:

Խորհրդարանականների կարծիքով, Ուկրաինայում քաղաքական ճգնաժամը մասամբ կարող է հաղթահարվել «2004 թվականի Սահմանադրությանը վերադառնալով... անցումային կառավարության ստեղծմամբ եւ վաղաժամկետ ընտրությունների անցկացմամբ»:

Եվրախորհրդարանականները խնդրել են Ուկրաինայի նախագահ Վիկտոր Յանուկովիչին՝ «անհապաղ եւ առանց նախապայմանների ազատել ու վերականգնել անօրինականորեն կալանավորված բոլոր ցուցարարների ու քաղբանտարկյալների, այդ թվում՝ Յուլյա Տիմոշենկոյի քաղաքական իրավունքները»:

ՄՈԼԴՈՎԱ-ԳԱԳԱՈՒԶԻԱ ՔՎԵԱՐԿԵԼ ԵՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՆԱԼՈՒ ՕԳՏԻՆ

Գագաուզիայում անցկացված հանրաքվեի ընթացքում Մաքսային միությանն անդամակցելը պաշտպանել է ընտրողների ավելի քան 98,4 տոկոսը: ԵՄ-ին անդամագրվելու օգտին քվեարկել է շուրջ 2,7 տոկոսը: Հանրաքվեի ընթացքում, Գագաուզիայի բնակիչներին առաջարկել էին արտահայտվել «ինքնավարության հետաձգված կարգավիճակի» օգտին, որը նրան ինքնորոշման իրավունք է տալիս Մոլդովայի կողմից անկախությունը կորցնելու դեպքում: Զուգահեռաբար անցկացվել էր կոնսուլտատիվ հարցում. աջակցո՞ւմ են նրանք արդյոք ԵՄ-ին անդամակցելու Քիշնեւի քաղաքականությանը, թե՞ հանդես են գալիս Մաքսային միությանը միանալու օգտին:

Մոլդովայի իշխանությունները հանրաքվեն անօրինական են համարում, քանի որ «երկրի արտաքին քաղաքականությունը տեղական իշխանությունների իրավասության մեջ չի մտնում»:

Ճարաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Փետրվարի 6-ին Վրաստանի արտաքին գործերի նախարարությունում կայացավ 2013-2015 թվականների՝ Վրաստանի համար Եվրամիության գործողությունների ծրագրի շնորհանդեսը: Այն անցկացրեց Վրաստանի ԱԳ նախարար Մայա Փանջիկիձեն: Շնորհանդեսին ներկա էին Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թորբեռն Յագլանդը, Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին:

2013-2015 թվականների ծրագրում ներառված են նախագծեր, որոնց նպատակն է մարդու իրավունքների, ժողովրդավարության եւ օրենքի գերակայության ոլորտում Վրաստանի կառավարության հետ Եվրոպայի խորհրդի համագործակցության խորացումը: Գործողությունների ծրագիրը 2013 թվականի հոկտեմբերին ընդունվել էր Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից, Եվրոպայի խորհրդի եւ Վրաստանի կառավարության միջեւ խորհրդատվության արդյունքում, եւ դրա իրականացման համար ծախսվելու էր 17 միլիոն եվրո:

Գործողությունների ծրագիրը ներառում է մարդու իրավունքների պաշտպանության դատարանի անկախության եւ արդյունավետության, ոստիկանության եւ պոտենցիալ համակարգի բարեփոխման, լրատվամիջոցների արտահայտման եւ ժողովների ազատության, արդարացի եւ անկախ ընտրությունների, տեղական ժողովրդավարության, հանդուրժողականության եւ հակախտրական քաղաքականության, վստահության վերականգնման մեխանիզմների ոլորտները:

Գործողության ծրագրում ներառված նախագծերը Եվրոպայի խորհուրդը իրականացնելու է տեղի գործընկերների, մասնավորապես՝ նախարարությունների, ժողովրդական պաշտպանի գրասենյակի, խորհրդարանի, դատական իշխանության, համապատասխան մասնագիտական կազմակերպությունների եւ քաղաքացիական հատվածի հետ միասին:

Առանձին նախագծեր կիրականացվեն Եվրոպայի խորհրդի եւ Եվրամիության համատեղ ծրագրերի շրջանակներում:

ՎՐԱՍՏԱՆԸ ԿԱՏԱՐԵՑ ՄԵՍԽԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանը կատարել է Եվրախորհրդի առջեւ ստանձնած խորհրդային ժամանակ արտաքսված մեսխերի հայրենադարձության պարտավորությունը:

Այդ մասին հայտարարությամբ հանդես եկավ Վրաստանի փախստականների եւ բնակեցման գործերով նախարարությունը: Գերատեսչության տվյալներով, Եվրախորհրդին անդամագրվելիս՝ 1999 թվականին Վրաստանը ստանձնել էր խորհրդային ժամանակ արտաքսված մեսխերի վերադարձման եւ ինտեգրման, ներառյալ՝ նրանց Վրաստանի քաղաքացիություն հանձնելու իրավական բազայի ստեղծման պարտավորությունը:

Համապատասխան օրենքի ընդունումից հետո, Վրաստան վերադառնալու խնդրանքով, իշխանություններին դիմել էր 5841 մարդ, որից 1174-ին արդեն շնորհվել է բռնագաղթվածի կարգավիճակ, 7-ը ստացել է Վրաստանի քաղաքացիություն: «Հետեւաբար, կարելի է ասել, որ Վրաստանը կատարել է Եվրախորհրդի առջեւ ստանձնած պարտավորությունը»,- ասված է նախարարության հայտարարության մեջ:

ԿՐԹԱԿԱՆ

ՄԱՆԴԱՏՈՒՐՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՕԳՏԱԿԱՐ Է ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին արծագանքել է դպրոցներում մանդատուրների ինստիտուտի հնարավոր վերացման մասին տեղեկատվությանը՝ նշելով, որ հարցի մանրամասներին ծանոթ չէ:

«Նախորդ իշխանության ժամանակ մանդատուրների ինստիտուտն այն հիմնական լծակն էր, որով երկրի ղեկավարությունը երկաթե ձեռքով կառավարում էր դպրոցները: Մենք դա առաջին իսկ տարում փոխեցինք, եւ այդ ծառայությունը դարձավ դպրոցում կարգուկանոնի պահապան օղակ: Խոսում եմ իմ աշխատանքի սկզբնական փուլի մասին եւ որքանով տեղեկացված եմ, գործընթացն առավել խորացել է ու դարձել առավել ճկուն: Դրա շրջանակներում, նախատեսված է հոգեբանական ծառայություն, երեխաներին օգնություն, այսինքն՝ այսօր այդ ծառայությունը ոչնչով չի հիշեցնում Դմիտրի Շաշկինի ժամանակների՝ դպրոցում եւ ուսուցիչների նկատմամբ ահաբեկչության լծակին»,- նշեց նախագահը:

Նշենք նաեւ, որ Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը հերքել է դպրոցների մանդատուրների ծառայության հնարավոր վերացման մասին տեղեկությունները:

Գերատեսչության տեղեկատվությամբ, պիլոտային նախագծի շրջանակներում, հաջողությամբ իրականացվել է մանդատուրների ծառայության բարեփոխումը: Դրան ավելացվել են հոգեբանական կենտրոնները եւ պաշտոնավարման ծրագրավորման գործառույթը: Այդպիսով, վերոնշյալ ծառայությունը դպրոցներին կմատուցի կոմպլեքսային սպասարկում:

Նախարարությունում նշում են նաեւ, որ բարեփոխման շրջանակներում մշակվել են նաեւ սահմանադրական փոփոխություններ, որոնք արդեն հավանության են արժանացել կառավարության կողմից եւ ներկայացվել՝ խորհրդարանին:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԿՐՃԱՏՎԵՑԻՆ ՔՐԵԱ-ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վրաստանի քրեա-կատարողական, պրոբացիայի եւ իրավաբանական օգնության նախարարության իրավասությունները կրճատվեցին:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հրամանագրով, նախարարությունը զրկվել է իրավաբանական օգնություն ցուցաբերելու գործառույթից:

Միաժամանակ, Իրակլի Ղարիբաշվիլու հրամանագրով, հունվարի 27-ին Սոզար Սուբարին նշանակվել է քրեա-կատարողական եւ պրոբացիայի նախարար, հետեւաբար՝ ազատվել քրեա-կատարողական, պրոբացիայի եւ իրավաբանական օգնության նախարարի պաշտոնից:

Այլ հրամանագրով, վարչապետը պաշտոնաթող է արել քրեա-կատարողական, պրոբացիայի եւ իրավաբանական օգնության առաջին փոխնախարարին եւ մյուս փոխնախարարներին, նշանակել նոր, քրեա-կատարողական եւ պրոբացիայի առաջին փոխնախարար ու փոխնախարարներ:

Հրամանագրում նշված է, որ այն ընդունվել է «Վրաստանի կառավարության իրավասությունների եւ գործունեության կարգի, կառուցվածքի մասին» օրենքին համապատասխան:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵՑ ԿԵԶԵՐԱՇՎԻԼՈՒՆ



Ֆրանսիական էքս-ան-Պրովանս քաղաքի բողոքարկման դատարանը նախնական կալանքից գրավով ազատ է արձակել Վրաստանի պաշտպանության նախկին նախարար Դավիթ Կեզերաշվիլուն:

Ինչպես հայտարարել են նախկին նախարարի փաստաբանները, նա մինչեւ դատի անցկացումը իրավունք չունի լքել Ֆրանսիայի տարածքը:

Հիշեցնենք, որ Դավիթ Կեզերաշվիլին ձերբակալվել էր Նիցցայի օդանավակայանում, 2013 թվականի հոկտեմբերի կեսերին: Իսկ մինչ այդ, Վրաստանի հետաքննդատական մարմինները նախկին նախարարին հեռակա կարգով մեղադրանք էին ներկայացրել կաշառակերության եւ մաքսանենգության մեջ: Հետաքննության տեղեկատվությամբ, Կեզերաշվիլու ապօրինի գործունեության արդյունքում, վրացական պետությանը հասցվել է 50 միլիոն դոլարի վնաս:



ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԸ ՀԵՏԱՅՈՒ ՍԱՀՄԱՆՎԵԼ Է 6 ՏԱՐԵԿԱՆԸ

Փետրվարի 6-ին Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունում անցկացված աշխատանքային եզրափակիչ հանդիպմանը մշակվեց հանձնարարական, ըստ որի, 5-ի փոխարեն, երեխաների դպրոցական տարիքը սահմանվել է 6 տարեկանը:

Գերատեսչության տեղեկատվությամբ, 2014-2015 ուսումնական տարին կլինի անցումային եւ երեխաների դպրոցական տարիքը կհաշվարկվի՝ ելնելով նրանից, թե որ երեխան է 6 տարեկան դարձել մինչեւ 2014 թվականի դեկտեմբերը: Իսկ հաջորդ տարի երեխաները դպրոցական տարիքի կհամարվեն, եթե նրանց 6 տարին լրացել է մինչեւ նոր ուսումնական տարվա մեկնարկը:

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԵՎ ԾԵՐԱՆՈՑՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԸ

Ինչպես հայտարարել է Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Սերգեյենկոն, նախարարությունը երկրի ողջ մասշտաբով իրականացնում է մանկապարտեզների եւ ծերանոցների ամենամյա մոնիտորինգ: «Դա մեր պարտականությունն է, եւ այն իրականացվում է երկրի ողջ մասշտաբով: Վերոնշյալ հաստատությունների մի մասը գտնվում է Պատրիարքության, իսկ մնացածը քաղաքացիական կառավարման ներքո: Դա ծրագրավորված մոնիտորինգ է, եւ որը պետք է անցկացվի ամեն տարի»,- ասաց Սերգեյենկոն:

ՏԱՍՆԱՊԱՏԿՎԵԼ Է ՎՐԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆԸ

«Մաեստրո» հեռուստաընկերությանը տրված հարցազրույցում Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ Վրաստանի նկատմամբ Եվրոպայի հետաքրքրությունը տասնապատկվել է: Նրա խոսքերով, դա որոշակիորեն կապված է Ուկրաինայում ծավալված իրադարձությունների հետ: «Բրյուսել կատարած այցը հաջողվեց, այնտեղ անցկացվեցին հետաքրքիր շատ հանդիպումներ: Նրանցից հավաստիացում ստացա, որ Վրաստանն օգոստոսին կստորագրի ասոցիացման մասին համաձայնագիրը: Եվրամիության ցանկությունն է Վրաստանի կողմից վերոնշյալ համաձայնագրի շուտափույթ ստորագրումը: Ընդհանրապես, Վրաստանի նկատմամբ հետաքրքրությունը տասնապատկվել է»,- հայտարարեց նա:

Անդրադառնալով ռիսկերի նախականխմանը՝ վարչապետը նշեց, որ այդ ուղղությամբ «արվում է ավելին, քան անհրաժեշտ է: «Մենք եվրոպական գործընկերներին ներկայացրինք սպառիչ տեղեկատվություն, եւ նրանք տեղեկացված են այն սպառնալիքների մասին, որոնք կարող են ծագել մեր հարեւանների կողմից»,- ընդգծեց Ղարիբաշվիլին:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՈՒԺԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՈՒՄ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին փոխել է պետական հատուկ պահպանության ծառայության ղեկավարին: Այդ պաշտոնում Թեմուր Մղեբրիշվիլին փոխարինել է նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլու անձնական պահակախմբի ղեկավար, ապա պետական հատուկ պահպանության ծառայության ղեկավար Անզոր Չուբինիձեին:

Չուբինիձեն հունվարի 22-ին պաշտոնաթողության դիմում էր ներկայացրել, որը բավարարվել էր:

Իրակլի Մղեբրիշվիլին մինչ այդ աշխատում էր Վրաստանի ՆԳ նախարարությանն առընթեր ռազմավարական օբյեկտների պաշտպանության դեպարտամենտի տնօրենի պաշտոնում:

ՈՂՋԵՐԹ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՈԳԻՆ ՉՁՈՒՇԱԲԵՐԵՑԻՆՔ ԿՈՆԿՐԵՏ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ան Ղիփիանին ու երկրի օլիմպիական պատվիրակության անդամները, Գիորգի Մարգվելաշվիլին նշեց, որ Սոչիում Վրաստանը կկանգնի միջազգային հանրության կողքին: Անդրադառնալով այն հարցին, թե ինչու Վրաստանը չհրաժարվեց օլիմպիական խաղերի մասնակցությունից՝ նախագահը հայտարարեց. «Սոչիի օլիմպիական խաղերն անցկացվում են Վրաստանի համար բարդ իրավիճակում, սակայն, մեր կուրսը պարզ է ու անփոփոխ: Մենք օլիմպիական ոգին չզոհաբերեցինք կոնկրետ հիմնախնդիրներին, որոնք ծագում էին քաղաքական ենթատեքստով, եւ դա համարում ենք քաղաքական ճիշտ որոշում: Վրաստանը Սոչիում կկանգնի միջազգային հանրության կողքին, այն երկրների կողքին, ովքեր պաշտպանում են Վրաստանի տարածքային ամբողջականությունը եւ սահմանների անձեռնմխելիությունը:

Վրաց օլիմպիականներին ողջերթի խոսքով դիմեց նաեւ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին: «Օլիմպիական խաղերի մասնակցությունը մեծ պատիվ է ցանկացած մարզիկի համար: Մենք հպարտանում ենք, որ վրաց մարզիկները բավարարել են օլիմպիական խաղերի չափորոշիչներին եւ կմասնակցեն աշխարհի լավագույն մարզիկների մրցումներին: 2014 թվականի Սոչիի օլիմպիադայի մասնակցությունն առանձնակի արձագանք է առաջացնում, քանզի այն անցկացվում է վրաց-ռուսական սահմանի վրա, բռնազավթված Աբխազիայից ոչ հեռու: Խաղերին մասնակցության մասին որոշման ընդունումը դժվարին էր, սակայն մենք հաշվի առանք տարբեր գործոններ եւ սույն որոշումն ընդունեցինք հօգուտ վրաց սպորտի եւ մեր մարզիկներին՝ ելնելով Վրաստանի պետական շահերից: Սպորտի քաղաքականացումն անթույլատրելի է: Մասնակցելով Սոչիի օլիմպիադային՝ Վրաստանը բարի կամքի քայլ է կատարում միջազգային հանրության եւ օլիմպիական շարժմանն ընդառաջ»,- ասված է վարչապետի ողջույնի ուղերձում:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻՆ ՀԻՄՆԵՑ «ՔԱՂԱՔԱՑԻ» ԱՆՎԱՄԲ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

երկրի քաղաքացիական ողջ հատվածին այդպես գործելու կոչ եմ անում»,- հայտարարեց նա:

Ըստ Իվանիշվիլու, ամենակարեւորը քաղաքացիական պատասխանատվությունն է: Նրա խոսքերով, կազմակերպությունը սահմանելու է այն պահանջները, որոնք ուղղվելու են կառավարությանը եւ գտնելու են կառավարության վարձակալման ամենահիրական ուղին: Այդ ենթատեքստում Բիձինա Իվանիշվիլին առանձնակի ընդգծեց բնակչությանը տեղեկացնելու ուղղությամբ լրատվամիջոցների դերը: «Մենք մտադիր ենք ֆինանսավորել նոր վերլուծաբաններին, ովքեր սթափ են նայում եւ կկարողանան ներկայացնել օբյեկտիվ ու արհեստավարժ տեղեկատվություն»,- հայտարարեց նախկին վարչապետը:

Իվանիշվիլու խոսքերով, իր հիմնած ոչ կառավարական կազմակերպության գործունեության ապահովման համար, ինքը մտադիր է տարեկան ծախսել շուրջ 1 միլիոն լարի:

«ԳՈՀ ԵՄ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ»

Բիձինա Իվանիշվիլին շնորհանդեսին անդրադարձավ նաեւ կառավարության գործունեության հարցին: Պատասխանելով լրագրողների այն հարցին, թե «ինչպիսի երեք դիտողություններ նա կարող է անել նախարարների կաբինետի հասցեին եւ ինչպե՞ս է մտադիր շփվել նրանց հետ, Բիձինա Իվանիշվիլին հայտարարեց, որ ինքը գոհ է կառավարության գործունեությունից: «Շփվելու ձեւերը կարող է տարբեր լինել, նրանցից շատերի հետ ես կարող եմ խոսել ուղղակիորեն, բացի այդ, կարող եմ առաջարկություններ անել լրատվամիջոցների միջոցով, կարող եմ նրանց կանչել բանավեճերի: Բայց ես ցանկանում եմ ընդգծել, որ գոհ եմ Վրաստանի նոր կառավարության գործունեությունից:

Համարձակորեն կարելի է ասել, որ այսօր մենք լավ իշխանություն ունենք, բայց այն իդեալական լինել չի կարող: Ինչ վերաբերում է ժողովրդի հետ կառավարության մերձեցման գործընթացին, ապա այն սկսվել է, եւ ես գոհ եմ դրանից: Կառավարող թիմը լավ է կատարում իր պարտականությունները, սակայն հասարակայնությունը չպետք է հանգստանա, այլ պետք է շարունակի վերահսկել իշխանության մարմինների աշխատանքը: Անհրաժեշտ է նշել, որ մեր գլխավոր հիմնախնդիրն արագ արդյունքների սպասումն է: Նկատի ունեմ աշխատատեղերի հիմնումը եւ երկրի տնտեսական վերածնունդը»,- հայտարարեց Բիձինա Իվանիշվիլին:

«ՕԼԻՄՊԻԱԴԱՆ ՀԻԱՆԱԼԻ ՄԻՋՈՑ Է ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ»

Անդրադառնալով Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցին՝ Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին նշեց, որ ինքը ողջունում է Սոչիի Օլիմպիական խաղերին մասնակցելու վրացական կողմի որոշումը եւ այն կարծիքին է, որ դա կնպաստի Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորմանը: «Օլիմպիադան գերազանց միջոց է Ռուսաստանի հետ հարաբերությունները կարգավորելու համար: Մենք ցանկանում ենք, որ մեր երկիրը լինի ուժեղ ու լիարժեք, իսկ դրա համար մեզ հարկավոր է լավ հարաբերություններ ունենալ բոլոր հարեւանների հետ»,- հայտարարեց Բիձինա Իվանիշվիլին:

Նրա խոսքով, «ընդդիմախոսների հայտարարություններին հակառակ, Վրաստանը կապացուցի, որ միանգամայն հնարավոր է դառնալ Եվրամիության անդամ եւ, միեւնույն ժամանակ, լավ հարաբերություններ ունենալ Ռուսաստանի հետ»:

ՄԱՐԻՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ

ՈԼՈՐՏ

ԱՅՍ ՏԱՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻՑ ԿՕԳՏՎԻ ՇՈՒՐՋ 800 ՀԱԶԱՐ ՖԵՐՄԵՐ

90 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ՝ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի կառավարությունը գյուղատնտեսության ոլորտը հայտարարել է 2014 թվականի առաջնահերթային ուղղություններից մեկը: Ելնելով վերոնշյալից՝ գյուղատնտեսության նախարարությունը մշակել եւ կառավարության հաստատմանն էր ներկայացրել ոլորտի զարգացմանն ուղղված մի շարք նախագծեր: Ներկայացված առաջարկություններից մեկը վերաբերում էր սակավահող ֆերմերներին աջակցության ցուցաբերմանը: Ի՞նչ օգնություն է նախատեսում ցուցաբերել պետությունը, ֆերմերները, անցյալ տարվա օրինակով, ընթացիկ տարում կստանա՞ն արդյոք արտոնյալ գներով վառելանյութի, սերմանյութի, պարարտանյութի, գյուղատնտեսական գործիքների ձեռքբերման վաուչերներ, եւ, ընդհանրապես, ի՞նչ է նախատեսում գյուղատնտեսության նախարարության կողմից հատուկ ընթացիկ գարնանային աշխատանքների խրախուսման համար մշակած նախագիծը:

Հաշվի առնելով թեմայի հրատապությունը՝ մենք զրուցեցինք նախարարության կողմից մշակված եւ կառավարության կողմից արդեն հաստատված «2014 թվականի գարնանային աշխատանքների կատարման համար սակավահող ֆերմերների աջակցության» նախագծի մենեջեր Դավիթ Կիկնաձեի հետ:

- ***Բատոնո Դավիթ, երկրի գյուղատնտեսության նախարարության տեղեկատվությամբ, այս տարի ֆերմերներին, գարնանային աշխատանքների կատարման նպատակով, անցյալ տարվա համեմատությամբ, առավել ձեռնտու պայմաններ են առաջարկվում: Ի՞նչ նորամուծություններ են ներառված նախագծում, եւ որքա՞ն է հատկացված նախագծի իրականացման համար:***

- «2014 թվականի գարնանային աշխատանքների կատարման համար սակավահող ֆերմերների աջակցության» նախագծի իրականացման համար հատկացվել է շուրջ 90 միլիոն լարի: Նախագիծը ֆինանսավորվելու է պետական բյուջեից եւ հանրային իրավունքի իրավաբանական անձ (ՀԻԻԱ) «Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամից», իսկ դրա իրականացումն հանձնարարվել է ՀԻԻԱ Գյուղատնտեսական նախագծերի կառավարման գործակալությանը:

- ***Անցյալ տարի համանման նախագծի իրականացման ժամանակ պարզվեց, որ նախօրոք կազմված ցուցակները հստակեցված չէին, եւ շատերը գյուղատնտեսական տոմսակներ չստացան:***

- Ցավոք, անցյալ տարի նման փաստեր վավերացվեցին: Անցյալ տարի մունիցիպալիտետների վարչությունների կողմից տոմսակների հանձնման գործընթացում տեղ գտան թերացումներ: Այս տարի ցուցակների հստակեցման ուղղությամբ որոշակի աշխատանքներ կատարվեցին, եւ արդյունքում՝ ցուցակների հստակեցումից հետո այս տարի գյուղատնտեսական աշխատանքների աջակցության նախագծից կկարողանա օգտվել ավելի քան 800 հազար սակավահող ֆերմեր: Ավելացնեմ, որ այս տարի նախագծի մասնակիցների թիվը շատ ավելի մեծ կլինի:

- ***Ըստ նախագծի, նվազագույնը ի՞նչ մեծության հողամաս պետք է ունենա ֆերմերը, որ կարողանա օգտվել նախագծով նախատեսված արտոնություններից:***

- Հողատարածքների մեծության տեսանկյունից ֆերմերները բաժանվել են երկու կատեգորիաների՝ ֆերմերներ, ովքեր ունեն մինչեւ 0,25 հեկտար հողամաս, եւ ֆերմերներ, որոնց տնօրինության տակ կա 0,25-ից մինչեւ 1,25 հեկտար հողամաս: Ընդհանուր առմամբ, «2014 թվականի գարնանային աշխատանքների կատարման համար սակավահող ֆերմերների աջակցության» նախագծին կարող են մասնակցել բոլոր այն ֆերմերները, ովքեր իրենց սեփականության ներքո կամ վարձակալության կարգով ունեն մինչեւ 1,25 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատարածք, որտեղ աճեցնում են միամյա կամ բազմամյա մշակաբույսեր:

- ***Իսկ նախագծով ի՞նչ օգնություն է ցուցաբերվելու ֆերմերներին, ի՞նչ վաուչերներ կտրվեն նրանց:***

- Այս տարի «2014 թվականի գարնանային աշխատանքների կատարման համար սակավահող ֆերմերների աջակցության» նախագծին մասնակից ֆերմերները կօգտվեն երկու տեսակի տոմսակներից: Առաջինը հերկի տոմսակն է, երկրորդը այսպես կոչված «ագրոտոմսակը»:

Ինչպես երեւում է անվանումից, առաջին տոմսակը նախատեսված է հերկի աշխատանքների իրականացման, իսկ երկրորդը գյուղատնտեսական ապրանքների ձեռքբերման համար: Վերջինս, ի տարբերություն անցյալ տարվա, այս տարի կտրվի բանկային պլաստիկ քարտերի տեսքով: Յուրաքանչյուր քարտը նախատեսված է 50 միավորի համար:

- ***Գուցե մանրամասնեք, թե ինչո՞վ է պայմանավորված բանկային պլաստիկ քարտի առավելությունը:***

- Միանգամից նշեմ, որ «Լիբերթի բանկի» կողմից պատրաստած պլաստիկ քարտով ֆերմերը շատ ավելի ճկուն եւ փոխշահավետ հարաբերություններ կկարողանա հաստատել գյուղատնտեսական ապրանքների մատակարարների (խանութների) հետ: Պլաստիկ քարտով ֆերմերը, ի տարբերություն անցյալ տարվա պրակտիկայի, ցանկալի ապրանքները կարող է գնել տարբեր խանութներում մաս-մաս եւ ժամանակի ավելի երկար հատվածում:

- ***Անցյալ տարի գործարկված նախագիծը ֆերմերներին հնարավորություն տվեց ձեռք բերել գյուղատնտեսական գործիքներ: Այս տարի ի՞նչ է նախատեսված այդ տեսանկյունից:***

- Իրոք, անցյալ տարվա նախագծով ֆերմերներին ընձեռվեց 53 միլիոն լարիի գյուղատնտեսական գործիքներ գնելու հնարավորություն: Այս տարի նման ոչինչ նախատեսված չէ, քանի որ անցյալ տարի գնված գործիքներից ֆերմերները կարող են օգտվել ե'ւ այս, ե'ւ հաջորդ տարիներին:

- ***Անդրադառնանք «հերկի տոմսակին»: Վրաստանի տարածաշրջաններում հերկի աշխատանքները սկսվում են տարբեր ժամանակներում: Առանձին վայրերում դրանք արդեն սկսվել են: Ինչպե՞ս է նախատեսվում «Հերկի տոմսակի» օգտագործման ընթացակարգը:***

- Հաշվի առնելով ընթացիկ տարվա սառնամանիքները՝ երկրի տարածքի նշանակալի մասում հողային աշխատանքները չեն սկսվել: Մասնակիորեն, դրանք մեկնարկել են Քվեմո Քարթլիի տարածաշրջանում: Մենք հաշվի ենք առել այդ ֆերմերների դրությունը, եւ բոլոր ֆերմերները, ովքեր հերկը սկսել են, «Հերկի տոմսակներն» արդեն ստացել են: Նրանք, ովքեր ուշացումով են ստացել այդ տոմսակները, իրավասու են դրանք վերադարձնել եւ այդ տոմսակներով նախատեսված գումարը, ավտոմատորեն կավելացվի «Ագրոտոմսակի» գումարին:

Նշեմ, որ վերոնշյալ գործընթացը մեր կողմից մշտական մոնիտորինգի կենթարկվի, եւ հուսով եմ, որ ֆերմերները նախագծի կիրարկումից դժգոհ չեն մնա:

- ***Իսկ ի՞նչ է ձեռնարկվում ֆերմերներին գյուղատնտեսական տեխնիկայով ապահովելու ուղղությամբ:***

- Սակավահող ֆերմերներին գարնանային աշխատանքների, այն է՝ հողամասերի հերկման իրականացման եւ գյուղատնտեսական տեխնիկայով ապահովման գործում, երկրի ողջ մասշտաբով օգնություն կցուցաբերեն «Մեխանիզատոր» ՍՊԸ-ն եւ 117 կոնտրակտորները:

- ***Վերջում նախագծի կիրարկման ժամկետների մասին: Ի՞նչ ժամկետով է այն նախատեսված եւ ե՞րբ է մեկնարկելու:***

- Միանգամից ասեմ, որ «2014 թվականի գարնանային աշխատանքների կատարման համար սակավահող ֆերմերների աջակցության» նախագիծը, բերքահավաքի բացառությամբ, ներառում է գյուղատնտեսական աշխատանքների կատարման ամենաեռուն ժամանակահատվածը: Այն մեկնարկել է փետրվարի 1-ին եւ կշարունակվի մինչեւ օգոստոսի վերջը:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ